

ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՄՆԱՆ ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ, ՔԱՆ ՇԵՆՔԻ ՓԼԱՏԱԿՆԵՐԻ

Խորհրդային տարիներին կառուցված շատ բազմաբնակարան շենքեր ֆիզիկապես մաշվել են, եւ, լինելով վթարային, այլեւս ենթակա չեն վերականգնման, կամ էլ վերականգնելն աննպատակահարմար է: Քանի դեռ դրանք պիտանի են շահագործման, սեփականատիրոջ փոխհարաբերությունները համատիրության, տեղական ինքնակառավարման մարմնի կամ էլ կենտրոնական իշխանության հետ, կարելի է ասել, բավարար չափով կանոնակարգված են: Բայց երբ վրա է հասնում շենքի հարկադրաբար քանդման անհրաժեշտությունը՝ վթարային լինելու պատճառով, բազմաթիվ խնդիրներ են առաջանում: Ո՞րն է պետության միջամտության չափը՝ ո՞րը իրավունքը, իսկ ո՞րը՝ պարտականությունը, եւ արդյո՞ք թեմային ուղղակիորեն առնչվող բոլոր հարցերն են օրենքով կարգավորված:



Այս հարցի շուրջ փորձեցինք զրուցել ՀՀ ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վարդան Բոստանջյանի հետ:

«ՀՀ-ում բնակարանային ֆոնդի զգալի մասը, ըստ էության, գերազանցել է իր տեխնիկական նորմաներով սահմանված օգտագործման ժամկետը, եւ ակնհայտ է, որ այն առաջիկայում կդադարի պիտանի լինել շահագործման համար: Պետությունն այս ուղղությամբ, անշուշտ, պետք է իրականացնի համապատասխան քաղաքականություն, որը կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Իհարկե, ֆինանսական հնարավորություններով, ինչպես նաև շուկայական հարաբերություններով պայմանավորված, պետությունը չի կարող բնակարաններ կառուցել ու տրամադրել բնակչությանը: Բնականաբար, այստեղ խոսքը չի վերաբերում սոցիալական որոշակի խոցելիություն ունեցող խմբերին: Պետությունը պետք է դրսևորի

բազմակողմանի, ինտերակտիվ քաղաքականություն»,- նշեց պրն Բոստանջյանը:

Ամեն տարի նորանոր շենքեր են դառնում վթարային, ԽՍՀՄ-ի շինարարական բումի ժամանակ, մարդկանց բնակարանով ապահովելու համար լուցկու տուփերի նման իրար կողքի շենքեր շարեցին, իսկ թե դրանք ինչ որակի են կառուցվել, տեղյակ ենք Սպիտակի երկրաշարժից: Ճարտարապետական ոչ մի արժեք չեն ներկայացնում այդ շենքերը, որպեսզի «պահպանվեն պետության կողմից», հիմա ի՞նչ է լինելու այդ բնակիչների ճակատագիրը. պետությունը պարտավոր է արդյոք որեւէ կերպ փոխհատուցել նրանց: *«Պետության դերի վերաբերյալ մեր հասարակության պատկերացումները գալիս են անցյալից եւ իներցիոն բնույթ են կրում: Մենք դեռեւս չենք կարողանում ընկալել, որ պետությունն ազատական պայմաններում չի կարող լուծել քաղաքացու ցանկացած խնդիր: Պետությունը պարզապես պետք է համապատասխան միջավայր եւ նախադրյալներ ստեղծի այդ խնդիրների արդյունավետ լուծման համար: Չնայած ներկայումս գործում են «Համատիրությունների մասին», «Բազմաբնակարան շենքերի մասին» ՀՀ օրենքները եւ մի շարք այլ իրավական ակտեր, սակայն տվյալ ոլորտում առկա են բազմաթիվ խոցելի տեղեր, եւ վիճակը մնում է գրեթե անկառավարելի: Դեռեւս գոյություն չունի լիարժեք իրավական կանոնակարգվածություն՝ մասնավորապես, վթարային եւ քանդման ենթակա շենքերի հետ կապված: Պետության կողմից բնակչին վթարային շենքում թողնելը արմատական սխալ է: Պետությունը, եթե մինչեւ անգամ չունենա բնակարան հատկացնելու հնարավորություն, պարտավոր է այդ մարդուն ապահովել գոնե նվազագույն կենսապայմաններով: Ծայրահեղ դեպքում՝ ավելի լավ է քաղաքացին մնա բաց երկնքի տակ, քան թե շենքի փլատակների: Պետությունն ունի գործառույթներ, որոնք պետք է բխեն մարդու իրավունքների պաշտպանությունից: Թող այդ պայմանները լինեն մինչեւ անգամ վատագույնը, բայց չլինի այնպես, որ քաղաքացուն ասեն՝ դու ապրելու ես 4-րդ կարգի վնասված շենքում»,-*նշեց մեր գրուցակիցը:

Բայց հանելով այդ մարդկանց վթարային շենքից, պարտավոր է արդյոք պետությունը նրանց ապահովել բնակարանով: Իսկ եթե ոչ, ապա այդ դեպքում կարող են բազմաբնակարանանոց շենքի բնակիչները հավաքվել եւ որոշել այդ հողատարածքի վրա իրենց միջոցներով նոր շենք կառուցել: Իսկ եթե բնակիչների մի մասը չհամաձայնվի՞, ի՞նչ պետք է անեն մնացածները: *«Ներկայումս հանրապետությունում ձեւավորված է որոշակի իրավական դաշտ, որտեղ ամրագրված են ե՛ւ պետության, ե՛ւ քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները: Սակայն,*

դրանով հանդերձ, դեռևս բացակայում է հանդուրժողականությունն ինչպես իշխանության, այնպես էլ բնակչության շրջանում: Մենք պետք է գիտակցենք, որ տվյալ հարցում վստահության մթնոլորտի ձևավորումը տեւական գործընթաց է եւ չի կարող միանգամից լինել: Պատմությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ տասնամյակների, հարյուրամյակների ընթացքում է նման ընկալումը մարդկանց մոտ ձևավորվում: Ցանկությունը լավ բան է, բայց քիչ է իրականացնելու համար»,- նշեց պրն Բոստանջյանը:

Ինչո՞ւ պետք է պետությունը բյուջեի միջոցների, ասել է թե՛ հարկատուների հաշվին վերականգնի որեւէ մեկի սեփական բնակարանը: Այդ որ՞ սեփական առանձնատան բնակիչն է փոխհատուցում ստանում ֆիզիկապես մաշված իր առանձնատունը քանդելու, փոխարենը նորը կառուցելու համար: «Ազատական տնտեսական հարաբերությունների պայմաններում գործում է բազմաձև սեփականություն: Կյանքը ցույց է տալիս, որ ուտոպիստական մոտեցումը կենսունակ չէ, այն միայն մտքի ֆանտազիայի արդյունք է: Պետությունը գիտակցում է, որ բնակչության մի որոշակի խումբ ունի ցածր եկամուտներ ու հնարավորություններ, ուստի պետք է այնպես անի, որ գոնե անձրեւը այդ մարդկանց վնաս չպատճառի, եթե նրա ունեցածն ընդամենը մի «հոլիկ» է: Դա էլ արդեն պետության «մեծության» խնդիրն է՝ իր գործառույթների ամբողջ շարանն օգտագործել հանուն իր քաղաքացու: Բայց, միեւնույն ժամանակ, պետությունը չի կարող ամեն վայրկյան յուրաքանչյուր անձի համար, դա լինի ֆիզիկական թե՛ իրավաբանական, անի ամեն ինչ: Լիբերալ հարաբերությունների պայմաններում այդպիսի բան չի լինում: Սեփականատերն ինքն է պարտավոր, օրինականության շրջանակներում, իր սեփականությունը պահպանել ու բազմապատկել»,- իր խոսքն այսպես ավարտեց պրն Բոստանջյանը:

ԱՐԱՍ ԱՆՏԻՆՅԱՆ